№ 7 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 19 1889 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 19 № 7

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ոգով և նոյն պրօգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլի է, վեց ամսվանը 6 րուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում Թամամշևի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի դումայի նիստը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեքպետեան դաշնակցութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սէրը Արտաքսված.

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

—

Յունվարի 16-ին Թիֆլիսի դուման կայացրեց մի վճիռ, որը մեծ նշանակութիւն ունի մեր ուսումնարանական գործի կանոնաւոր ընթացքի համար։

Ուսումնարանական վարչութեան պ. Հոգաբարձուն դիմեց քաղաքային դումային, խնդրելով որ դուման նշանակի տարեկան 10 հազար րուբլի օժանդակութիւն չորսդասեան պրօգիմնազիան վեցդասեան դարձնելու համար։ Դուման, չը նայելով որ այս տարի դէֆիցիտի է սպասում, չը նայելով որ իր ֆինանսական միջոցները շատ սուղ են, այնուամենայնիւ պատրաստութիւն յայտնեց տալ պահանջվող տարեկան 10 հազար րուբլի գումարը, այն պայմանով սակայն, որ քաղաքիս պետական դպրոցներում առաջվայ պէս պարտաւոր կերպով աւանդվեն տեղական լեզուները, այն է՝ հայոց և վրաց լեզուն։ Այդ վճիռը դուման որոշեց ներկայացնել ուսումնարանական հոգաբարձուին, խնդրելով նրան, որ նա իր կողմից հասցնի դումայի խնդիրքը բարձր կառավարութեան հայեցողութեանը։

Դումայի վիճեալ նիստում Նիկոլաձէ և Եւանգուլով ձայնաւորները գլխաւորապէս այն միտքն էին յայտնում, որ տեղական լեզուների աւանդելը ամենևին չի նսեմացնի պետական լեզուի ոյժն ու նշանակութիւնը։ Ընդհակառակն նոյն իսկ պետական շահերը պահանջում են, որ տեղացիները հիմնական կերպով ուսումնասիրեն իրանց մայրենի լեզուն, որի օգնութեամբ նրանք միջոց կունենան ուսումնասիրել և մեր երկրի անցեալն ու ներկան, նրա կեանքն ու դրականութիւնը և կը տան կառավարութեանը օգտաւէտ ծառայողներ ու թարգմաններ, կառավարութեան և ամբոխի մէջ օգտաւէտ միջնորդներ։ Եւ այդ հարցը, առհասարակ, նոր հարց էլ չէ. Քութայիսի ազնուական բանկը այն պայմանով է տալիս օժանդակութիւն իգական գիմնազիային, որ այդ գիմնազիայում դաս տրվի մայրենի լեզուն։ Թէ ձայնաւոր Բոտինեանց և թէ ձայնաւոր Սունդուկեանց աւելացնում են որ տեղական լեզուների աւանդելը պետական դպրոցներում այն պատճառով կարևոր է, որ քաղաքը երբէք չի խնայի իր նիւթական միջոցները նուիրելու ուսումնարանական գործի աջողվելուն նպաստելու համար, ինչքան սուղ էլ լինէր քաղաքային բիւջէտը։ Ձայնաւոր Ջէլօկաեվ առաջարկում է աւելացնել խնդիրքի մէջ հետևեալը. պէտք է խնդրել որ հայոց և վրաց լեզուների աւանդելը պարտաւորիչ լինի, ինչպէս էր 1802 թուից սկսած մինչև 1874 թիւը, և այն ժամանակ քաղաքը անսահման նիւթական օգնութիւն կը տայ քաղաքի ուսումնարանական գործին։

Դումայի ռուս ձայնաւորներն էլ՝ Կայդանով, Բախմանին, Իվանենկօ և ուրիշները իրանց կատարեալ համակրութիւնը յայտնեցին ձայնաւորների մեծամասնութեան կողմից յարուցած հարցին։

Դուման միաձայն որոշեց հաղորդել պ. Հոգաբարձուին, որ քաղաքը մեծ յօժարութեամբ նիւթական օգնութիւն կը հասցնի ժողովրդական լուսաւորութեան գործին, եթէ կիրառգործվի տեղական լեզուների աւանդելը քաղաքիս պետական դպրոցներում և խնդրել պ. Հոգաբարձուին յանձն առնել լուսաւոր ինիցիատիվը՝ հասցնել ուր հարկն է Թիֆլիսի դումայի վիճեալ խնդիրքը։

Դումայի այդ խելացի որոշման վրա մենք մեր կողմից ոչինչ չունենք աւելացնելու, բացի նրան մեր կատարեալ համակրութիւնը յայտնելու։ Վաղուց յայտնի է այն իրողութիւնը, որ մարդս թէ իրան և թէ հասարակութեան ու պետութեան համար աւելի օգտաւէտ է լինում, երբ աւելի զարգացած է լինում անհատապէս։ Որքան մարդու անհատական բոլոր յատկութիւնները և ընդունակութիւնները աւելի լայն և անարգել կերպով զարգանում են, այնքան նա աւելի օգտաւէտ կարող է լինել թէ իր անձի, թէ իր հասարակութեան և թէ իր հայրենիքի ու ամբողջ պետութեան համար։ Իսկ ոչինչ այն աստիճան չէ զարգացնում մարդուս բոլոր անհատական յատկութիւնները և նրա հոգու բազմակողմանի ընդունակութիւնները, որքան մատաղ հասակում մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը։

Սակայն մայրենի լեզուի և նրա միջոցով առարկաների ուսումնասիրութեան օգտաւէտութիւնը ամենևին չէ նսեմացնում իւրաքանչիւր ռուս քաղաքացու համար պետական լեզուի հիմնաւոր ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը։ Ընդհակառակը, որքան կովկասեցին փոքր հասակից սկսած աւելի լաւ կիմանայ իր մայրենի լեզուն,—այնքան աւելի էլ հեշտ կը լինի նրա համար, իր հասակի յաջորդ տարիներում, հիմնաւոր և արդիւնաւոր կերպով ուսումնասիրելու իր համար անհրաժեշտ ռուսերէնը։

Գ. Ա.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍԷՐԸ ԱՐՏԱՔՍՎԱԾ

ՎԷՊ

—

Մարկոսը՝ ինչպէս ասեցինք՝ ցախերի վրայ նստած՝ նայում էր իր չորս կողմը և բնութեան հետ ուրախ տրամադրութիւն ստանում։

Մարդուս միտքը՝ թէկուզ գիտութեան խորերն ընկած չը լինի, կարող չէ մի վայրկեան կանգ առնել։ Ինչպէս զարկերակը անընդհատ շարունակում է իր զարկերը, ինչպէս թոքերը շարունակ շունչ են առնում ու շունչ տալիս, ինչպէս ստամոքսը անընդհատ շարունակում է իր գործողութիւնը, այնպէս էլ մարդուս միտքը՝ գիշեր թէ ցերեկ, քնած թէ զարթուն, շարունակում է իր մտմտուքները։ Միայն քնած ժամանակը չէ, որ մարդ երազի մէջ է լինում շարունակ և անընդհատ, այլ նոյն իսկ ցերեկն էլ, արթուն զըւարթուն ժամանակ՝ մարդուս միտքը մեծ մասամբ երազների ու ցնորքների մէջ է ընկղմած։ Ի՞նչ հարստութիւն ասես, որ ձեռք չի բերում, ի՞նչ քաջագործութիւն ասես, որ չի անում, ի՞նչ նեղութիւնների մէջ ասես, որ չի ընկնում, և այսպէս շարունակ։ Ի հարկէ մէկում շատ է ցնորելու հակումը և թռիչք, միւսումը՝ նըւազ և թոյլ, նայած թէ ով ինչպիսի երևակայութեան տէր է, վառ, թէ հանգած։

Եւ ինչ է երազում արդեօք մեր Մարկոսը։

Նա երազում է, որ Նախշունն իրանն է, իր սեփականը, իր սրտի հատորը, որ իր հոգին նրա մէջ, և նրա հոգին իր մէջն է մտել։ Տեղափոխուած հոգիներից ամեն մէկը յայտնում էր միւսին իր ամբողջ սրտի խորհուրդները։ Եւ ինչեր ասես, որ Նախշունի հոգին չէր փսփսում Մարկոսի ականջին։ Եւ մեր Մարկոսը տիկնիկի հետ խաղացող երեխայի նման՝ իր մտքումը խաղում էր Նախշունի հետ և ասում, խօսում, խնդում, ծիծաղում։ Քիչ մտիկից եթէ մէկը նայէր վրան, կասէր՝ այս ինչ է պատահել սրան, ինչ ծամածռութիւններ է անում լուռ ու մունջ, ինչի վրայ է ժպտում, ունքերը կիտում, գլուխը ժաժ ու մաժ տալիս, ոտները խաղացնում...

7.

Մարկոսի մօրաքոյրը՝ Գիւլնազ աքերը, ձըւաձեղ շինեց և կանչեց Մարկոսին, որ գայ հաց ուտի։ Մարկոսը վայր եկաւ ցախերից, որ նրա համար եօթներորդ երկինքն էր, ներս գնաց և կէս-ուրախ, կէս-տխուր հացի նստեց։

—Քոռանամ ես ու կուրանամ, ասաց մօրաքոյրը,—այս քանի օր է մի հալալ հաց չես կերել, մաշվել ես, ինչ դառել... Կեր, մատաղըդ գնամ, կեր։ Սպասիր մի քիչ մեղր ածեմ վրան։ Ասաց մօրաքոյրը և գնաց բղաղից մի դգալով մեղր բերաւ ածեց ձըւաձեղի վրայ։

—Բա դու ինչի չես ուտում, մօքիր,—ասաց Մարկոսը,—նստիր, դու էլ կեր։

—Ես քար ուտեմ, քացախ ուտեմ... Իսկի բողազովըս բան է կուլ գնում... Դէ որ ասում ես, մի պատառ էլ ես վեր կառնեմ, որ քո ախորժակդ բացուի։ Կեր, մատաղըդ գնամ, կեր...

—Մօքիր...

—Ի՞նչ է, մատաղ.

—Մի բան եմ ուզում ասել...

—Ասա, մատաղ,

—Ասեմ...

—Ասա, հոգիս, ինչի չես ասիլ։

—Մեր կովը կըթել ես այսօր.

—Ա՜յ սատանայ, խօսքըդ կտուրն ես գցում... կշտիս կանգնած չէիր, որ կովը կթեցի։ Ի՞նչ ես ուզում ասել այն ասա։

—Ջեղաւ, չը կարացի ստու ասեմ։ Ուզիղն ասեմ, մօքիր։

—Ասա հոգիս, ինձանից ինչ ունես թաքցնելու։

—Ինչո՞ւ դու էլ ոչինչ չես ասում, մօքիր.

—Ի՞նչ ասեմ, մատաղ..

—Ես ինչ գիտեմ, ինչ որ միշտ ասում էիր..

—Ի՞նչ էի ասում.

—Ես ինչ գիտեմ, լաւ լաւ բաներ էիր ասում։

—Լաւ լաւ բաներ շատ եմ ասել, հիմա ո՞րն ես ուզում, որ ասեմ.

—Ես ինչ գիտեմ, միայն մէկն ասես, հերիք է։

—Այդ ո՞ր մէկն է, դէ միտըս գցիր, ասեմ։

—Ես ինչ գիտեմ, մտիցս ընկել է...

—Ա՜յ սատանայ... լաւ էլ միտըդ է, բայց չես ասում։ Դու հիմա այն վաղուան աղջիկն ես դառել, որ ասել է՝ «ինչի իշադնիցը չէք խօսում»... Մէկ անգամ ասա ու պրծիր, էլ ինչ ես կակազում։

—Դէ որ գիտես, էլ ես ինչ ասեմ։

—Ի հարկէ, գիտեմ։ Բայց ինչքան որ ես եմ աղաչանք արել քեզ, մի այնքան էլ հիմա դու ինձ աղաչանք արա, որ այդ բանը գլուխ բերեմ։

—Ի՞նչպէս աղաչանք անեմ, ինչ ասեմ։ Դէ լըսիր,—ցաւըդ տանեմ, ղադէդ առնեմ, մօքիր ջան...

—Սուս սուս սուս... այդ ինչ ես ասում. ես պիտի քո ցաւը տանեմ, ղադէդ առնեմ, գլխովըդ պտիտ գամ, չարըդ տանեմ... Ուզում ես, հէնց էսօր և եթ գնամ նշան տամ, ասեմ էլ, որ պատրաստուեն, Համբարձմանին հարսանիք անենք։

—Դու գիտես, ինչ անում ես՝ արա, միայն շուտ արա, էլ ձեռըս բանի չի կպչում. մենք հազար ու մի բան ունենք անելու...

Այսպէս ահա մեր Մարկոսը նշանեց էլ, հարսանիք էլ արաւ և հասան իրանց մուրազին։

8

Ադամն ու Եւա եդեմական դրախտի մէջ այնքան երջանիկ չէին, որքան մեր նորապսակները իրանց սիրոյ մէջ, որ ի վեր է քան զամենայն դրախտ։ Անցաւ մէկ տարի, երկու տարի, բայց մեր նորահասների մեղրալուսինը մազի չափ չէր պակասեցնում իր անմահական քաղցրութիւնը։ Օրէցօր սաստկանում էր նրանց սէրը, օրէցօր աւելանում։ Որքան շատ էին սիրում միմեանց, այնքան շատ էին ուզում սիրել։

Մարկոսը տանից չէր դուրս գնում, մինչև մի քանի անգամ չէր համբուրում Նախշունին. արդէն մի ոտը դուռը, ուզում է դուրս գնալ, բայց յետ էր դառնում, կրկնում իր համբոյրները, մինչև Նախշունը նրան զոռով չէր դուրս մըղում, դուռը քամակին կողպում։ Այս չէր նշանակում, ի հարկէ, որ Նախշունին դիւր չէին գալիս նրա համբոյրները. այլ այսպէս են սովոր փոքրուց էակները, նրանք միշտ պիտի ընդդիմանան, որպէս զի չխմը սաստիկ լինի, կայծերը խոշոր։ Այսպէս են ստեղծած նրանք բնութիւնից։

Սիրոյ այս քնքշութիւնը չը մեղկացրեց բնաւ Մարկոսին, այլ բարւոքեց նրան, մեղմացրեց նրա կոշտ բնաւորութիւնը, նա դարձաւ աւելի բարեհամբոյր, բարեսիրտ դէպի ամենքը։ Ոչովլի մի դառը խօսք չէր ասում, ոչովլի վրայ չէր բարկանում, ժպիտը նրա բերանից ցած չէր գալիս, նրա ուրախ տրամադրութիւնը չէր նըւազում։ Ամենքն էլ նշմարում էին այս, և ամենքն էլ նրան համարում էին ամենաերջանիկ ամուսինը աշխարհիս երեսին։

Տնական նեղութիւն, հոգս, ծանր աշխատանք, պարտք, պատուհաս, բոլորը, բոլորը նրա համար թեթևացել, ոչինչ բաներ էին դառել։ Ինչ նեղու-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 16 յունվարի

«Մշակի» այս յունվար ամսի 14 Թւի № 5 համարում Երևանից գրած մի Թղթակցութեան մէջ, այնտեղի քաղաքային գործերի անմխիթար դրութիւնը նկարագրելուց յետոյ, ի միջի այլոց և «Արուհայաթ» առուի յայտնի գործի դրութիւնը,—նամակագիրն ասում է. «....և գործը այնտեղ հասաւ, որ վարչութիւնը վճռեց գործը դատարան գցել: Որոշվեց հմուտ փաստաբան հրաւիրել. հրաւիրեցին Թիֆլիսից փաստաբան Խ. Քալանթարեանցին, որը յանձն առաւ գալ և գործին ծանօթանալ, կանխիկ 300 րուբլի ստանալու պայմանով. այդ փողը նա ստացաւ: Պ. Քալանթարեան գործին ծանօթանալուց յետոյ, մի տարի սրանից առաջ, գրաւոր կերպով խօսք տուեց յանձն առնել գործի պաշտպանելը յօգուտ քաղաքի, ինչպէս այստեղ, նոյնպէս և Թիֆլիսի դատաստանական պալատում: Անցաւ երկար միջոց այն օրից, բայց գործը դեռ երեսի վրա ընկած մնում է և գուցէ դեռ երկար կը մնայ»:

Ցետոյ խօսում է այդ գործի նշանակութեան և արժէքի մասին,—օրինակ, ինչպէս ջուրը խլող «կապալառու-ձայնաւորները» այս երեք տարվայ ընթացքում աւելի քան յիսուն հազար րուբլի փող շահեցին, շնորհիւ Արուհայաթի ջրի ու հզօր ձեռքերի»:

Հանգամանքը այսպէս նկարագրած լինելով. ընթերցողի վրա մի տեսակ տպաւորութիւն է թողնում, որպէս թէ մեղաւորը ես լինեմ, որ «անցաւ երկար ժամանակ այն օրից, բայց գործը դեռ երեսի վրա ընկած մնում է, և գուցէ դեռ երկար կը մնայ»: Քաւ լիցի, ես չեմ մեղաւորը, պատճառը մի այդպիսի՝ յիրաւի, տարօրինակ դանդաղութիւնն է՝ այսպէս մէկ կենսական գործում: Ընդհակառակը, իմ ձեռքում եղած մի շարք գրաւոր փաստերով կապացուցանեմ, որ այս դէպքում եթէ մէկը ամենայն ճշտութեամբ կատարել է իր պարտքը, այդ միայն ես եմ, և ահա ինչպէս:

1887 Թւականի դեկտեմբերի վերջին ստանալով Երևանի քաղաքային վարչութիւնից՝ քաղաքագլխի ձեռքով՝ հեռագրական հրաւէր գնալ Երևան «անձամբ անձին» խօսակցելու, ծանօթանալու Արուհայաթ առուի բարդ գործի հետ՝ այդ առուն խլողների դէմ դատ սկսելու մտքով, որի համար դուման «ընտրել է»,—ասած էր հեռագրում,—ինձ,—ես շտապեցի Երևան, գործի հետ ծանօթացայ և վարչութեանը տուեցի ինձնից պահանջած գրաւոր կարծիքս և պայմանների նախագիծը: Պէտք է ասած,—որ գործը գտայ վերին աստիճանի արդար և իրաւացի քաղաքի կողմից, որը 10,000 րուբլուց աւելի ծախս անելով ջուրը հանելու վրա, մի կաթիլ ջրի տէրը չէր տարիներով, ըստ երևոյթին, երկու ռամիկ Թուրքի շնորհով.... Առաջարկեցի բաւական մեղմ պայմաններ գործը սկսած Երևանի նահանգական դատարանից մինչև սենատը վարելու համար: Բացի այս,—կարող եմ աւելացնել,—որպէս զի քաղաքը քիչ ծախսով և որքան կարելի է շուտով ստանայ իր Թանգագին ջուրը,—յունվարի 8-ին (1888 Թ.) վարչութեան ատենում, մի քանի ժամ ամենաջերմ աշխատութիւնների և համոզմունքների միջոցով, հաշտեցրի քաղաքի հետ նրա հակառակորդներին եօթ հազար րուբլի գումարով յօգուտ քաղաքի, վնասների փոխարէն, և ջուրը առանց դատի վերադարձնելու պայմանով,—մի հաշտութիւն, որ իր աջողութեամբ զարմացրեց բոլոր տեսնողներին և լսողներին Երևանում: Կարծելով իմ պարտքը աւելի քան խղճմտանքով կատարած, ես ուրախ-ուրախ՝ որ այդքան ծառայութիւն արեցի իմ հայրենի նահանգի քաղաքին, դուրս եկայ դէպի Թիֆլիս:

Թէ ինչպէս «հզօր ձեռքերը» քանդել, տակնուվրա են արել այդ ամենը,—և հաշտութիւնը և այլն,—իմ դուրս գալուց յետոյ, Թէ ինչպէս մինչև օրս էլ (ահա երկրորդ տարին է գնում) ոչ իմ և ոչ ուրիշի ձեռքով այդ գործը չէ սկսած, ինձ ոչ ոք էլ չէ պատասխանած. Թէ ինչպէս այն երկու կապալառուները մինչև հիմա էլ վայելում են, ինչ որ ամենաարգիւնաբերն է Երևանի արգիւնքների մէջ,—մի քանի հարիւր դեսիատին աւելորդ քաղաքային հող, մի յորդառատ ջրանցքի հետ,—այդ ամենի մէջ ես այնքան անմեղ եմ, որքան և դուք, պ. խմբագիր:

Այս ես կարող եմ աւելացնել՝ որ, ինչպէս լսել եմ, Երևանի քաղաքային դուման իմ գրաւոր կարծիքս և առաջարկութիւններս ոչ Թէ չէ հերքել, այլ հաւանելով, գլխաւոր կէտերում, վճռել է միայն ինձ հետ շարունակել բանակցել, գրաւոր կերպով, մի քանի երկրորդական կէտերը աւելի պարզելու իմ պայմանների մէջ (չը գիտեմ ինչը այդքան պարզ չը համարելով): Բայց այս հանգամանքի բոլոր արժէքը և նշանակութիւնը ամենից լաւ լուսաբանվում են նրանով, որ ես մինչև օրս էլ,—ահա 13-րդ ամիսն է գնում,—ոչինչ տեղեկութիւն չեմ ստացել Երևանի դումայի այդ վճիռը կատարելու:

Խ. Քալանթարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից ստացանք հետևեալ լուրը: «Պատրիարքարանը Թ ա ք ր ի ո վ մը կառավարութենէն դրամ խնդրած ըլլալով կայսրը հազար ոսկի (իբր 8,500 րուբլի) պարգևած է Պատրիարքարանին: Առաջին անգամն է որ Հայոց Պատրիարքարանը այս օրինակ խնդրագիր մը կը մատուցանէ կառավարութեան: Այդ գումարը շնորհւած է որպէս զի վճարուին Պատրիարքարանի պաշտօնէից ամսաթոշակներն և ուրիշ պարտքեր, բայց կը կարծենք Թէ այդ գումարը պիտի յատկանայ Պատրիարքարանի վերաշինութեան»:

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: «Մեր կողմերի գիւղացիները, երբ կամենում են մթերքներ բերել Շուշի, վաճառելու համար, մինչև հայերի շուկան հասնելը, ստիպված են անցնել քաղաքիս Թուրքերի Թաղով: Այդտեղ յաճախ պատահում են անախորժ դէպքեր. պատահում է որ Թուրք սրիկաների խումբը բռնի կերպով խլում է գիւղացուց նրա ապրանքը, պատահում է որ Թուրքերը ստիպում են գիւղացուն չնչին գնով ծախել մթերքը, նոյն իսկ ծեծում են գիւղացիներին: Դարձնում ենք այդ դէպքերի վրա դաւառապետի ուշադրութիւնը»:

—

Ինչպէս մեզ գրում են, Թէ ՍՈՒԽՈՒՄ քաղաքի և Թէ նրա շրջակայ գիւղերի հայ բնակիչները չունեն հայոց եկեղեցի: Կայ մի եկեղեցի Բոխրցիխա գիւղում: Այժմ Սուխումի հայ բնակիչների մէջ միտք յղացաւ դիմել սրբազան առաջնորդին, որպէս զի իրաւունք տայ մատեան կազմել, հանգանակութիւններ ժողովելու համար, Սուխումում գոնէ մի փոքրիկ հայոց աղօթատուն շինելու նպատակով: Մեզ խնդրում են յայտնել որ ապագայ աղօթատան համար եկեղեցական այլ և այլ անօթներ, սաղաւարտներ, շուրջառներ, սուրբ գրքեր և այլն նուիրել ցանկացող բարեպաշտ անձինք կարող են ուղարկել իրանց այդ նուիրատուութիւնները կամ Բոխրցիխայի հայոց եկեղեցուն, կամ Սուխում՝ պ. Սիմէոն Ֆրանգուլեանցի անունով:

—

Շաբաթ օր, 21-ին յունվարի, ԹԻՖԼԻՍԻ ժողովարանում կը կայանայ երգչուհի օրիորդ Ամիրովի կոնցերտը: Մի քանի տարի առաջ օրիորդը մասնակցեց մեր քաղաքի կոնցերտներից մինում և հիացրեց մեզ ամենքիս իր գեղեցիկ ձայնով: Այնուհետև օրիորդ Ամիրովա, ինչպէս երևում է, առաջադիմութիւն արաւ. մենք կարդում էինք նրա անունը ոչ Թէ միայն մայրաքաղաքների ռուս լրագիրներում, բայց և արտասահմանեան լրագիրներում տպվող Պետերբուրգից գրած Թղթակցութիւնների մէջ: Օրիորդ Ամիրովա հայուհի է և Թիֆլիսեցի: Նա Պետերբուրգում իր երաժշտական ուսումն աւարտելուց յետոյ, այժմ դիտաւորութիւն ունի գնալ արտասահման՝ կատարելագործվելու համար: Կօնցէրտին կը մասնակցեն՝ տ.տ. Բիչուրինա, Մայէրովա և պ.պ. Լօզի, Կնիռա, Լիլին և այլն:

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է, որ ՄՕՍԿՎԱՅԻ առևտրական մի շարք շինութիւնների տակ փորելու ժամանակ գտան մի կաւէ աման, 7 փունտ կշռող արծաթեայ մանր դրամներով լի: Դրամները Միխայիլ Ֆեօդորովիչ Թագաւորի ժամանակներից են:

—

«Крымск. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ներքին փոխառութեան վերջին տիրաժի ժամանակ 200,000 րուբլու գումարը տարաւ Սեվաստոպօլ քաղաքում բնակվող 79 տարեկան մի պառաւ կին, Օստրոուխովա ազգանունով: Պառաւը անզաւակ է և ազգականներ էլ չունի:

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է ԲԱԳՈՒԻՑ, որ յունվարի 16-ին, «Թամարա» շոգենաւով հասաւ այդտեղ Բուխարայի դեսպանութիւնը:

—

Տարին մի անգամ զատիկ, այն էլ նաւակատիկ,—ահա Թէ ինչ կարելի է ասել յունվարի 16-ին, քաղաքային Թատրօնում տուած հայոց ներկայացման համար, որին մասնակցում էին համարեա Թէ բոլոր տեղական լաւ համարվող դերասանները և դերասանուհիները: Աւելորդ է, ի հարկէ, խօսել այս կամ այն խաղացողի մասին,—բայց անկարելի է չը նկատել, որ ներկայացման ընդհանուր տպաւորութիւնը լաւ չէր, և չը նայած նրան, որ մեր հասարակութիւնը վաղուց հայոց ներկայացում չէ տեսել, և պ. Զմըշկեանն էլ վատ չը կատարեց Շէյլօկի դերը, բայց և այնպէս Թատրօնի մասին նոյն իսկ ամենաԹոյլ գաղափար ունեցողները երբէք չեն կարող ներել այդ ներկայացումը կազմակերպող դերասաններին, որ նրանք չեն խղճահարվում հասա-

---

Թեան մէջ կուզի լինէր, հէնց որ գնում էր տունը, տեսնում իր Նախշունին և համբուրում, ամեն նեղութիւն օդի մէջ էր ցնդում, ամենայն վիշտ անց էր կենում, իբրև չեղած:

Պէտք է այս էլ ասել, որ վիշտ, նեղութիւն շատ էլ չէր պատահում, և եղածներն էլ չնչին էին լինում: Կարծես ամենայն ինչ իր սիրուց կախւած լինէր, կարծես ամենքն էլ պարտական էին սիրելու Մարկոսին, որովհետև նա ունէր մի սիրող սիրտ, որովհետև նա սիրում էր Նախշունին: Կարծես աշխարհի և բնութեան սէրը կախւած լինէր Նախշունի սիրուց. Նախշունը սիրում էր նրան, ուրեմն աշխարհ ամենայն և բնութիւն համայն պարտական էր նոյնպէս սիրել Մարկոսին: Մարկոսի վրայ շատ ճշդութեամբ էր կատարւում այն առածը, որ ասում է՝ «ինչ սրտով որ բանից կպչես, Աստուած էլ այն սրտովը կը յաջողի քեզ»:

Մեր Մարկոսի բախտից՝ Նախշունը նրա կենսատու հեղուկն էր, նրա երջանկութեան աղբիւրը: Մի անգամ չը պատահեց, որ Մարկոսը մի որ և է պակասութիւն նշմարէր տան մէջ—որ կամ կերակուրը լինէր անհամ, կամ հացը անեփ, կամ տուն ու դուռն անմաքուր, կամ իր մի տեղը պատռւած ու կեղտոտ, կամ տան գեղապէտն ու կարիք բանը պակսած, կամ հիւրն ու մշակը անբաւական դուրս գնացած: Ամենայն ինչ Նախշունի ձեռիցը գալիս էր: Շատ անգամ մարդի անելիքն էլ ինքն էր անում, որ նրան շատ նեղութիւն չը լինի, մանաւանդ երբ մարդը տանը չէր լինում: Կամայ ակամայ մարդ կը սիրէ և կը յարգէ այսպիսի ժրագլուխ տանտիկնոջը, ուր մնաց Մարկոսը, որ Նախշունի համար հոգի կը տար՝ առանց այս ամենը հաշւի առնելու: Նա չէր էլ ենԹադրում, որ իր Նախշունը կարող էր ուրիշ կերպ լինել, քան որ կար իսկապէս, չէր էլ իմանում, որ կան ուրիշ տեսակ կանայք էլ: Նա միայն իր մօրն էր տեսել, բայց ո՞ր զաւակի աչքին կերևայ իր մօր պակասութիւնը, եԹէ այդ պակասութիւնը նրանում լինի էլ: Ամեն մարդու համար իր մօր պէս կին ստեղծւած չէ աշխարհիս երեսին, և վա՜յ այն մօրը, եԹէ իր մասին վատ կարծիք ունի իրանից ծնւած զաւակը. լաւ էր նրան, եԹէ գնար ջուրն ընկնէր:

Մարկոսն ու Նախշունը միմեանց սիրում էին անհաշիւ և հաշիւն ինքն իրան գալիս էր տեղը, մինչդեռ հաշւով սիրողների տանից հաշիւը կորչում է:

Նրանց սէրը յառաջ էր բերել ոչ միայն երջանկութիւն, այլ և վերին աստիճանի առաքինութիւն.—բարեպաշտութիւն, բարեգթութիւն, աստուածսիրութիւն և եղբայրսիրութիւն: Ոչ մի աղքատ նրանց դռնից դատարկ ձեռքով յետ չէր դառնալ, ոչ մի ճամփորդ՝ անհիւրընկալութեան չէր մնալ, ոչ մի բան փոխ ուզող, «չէ» չէր լսիլ, ոչ մի կիրակի և տօն օր եկեղեցուց յետ չէին մնալ, ոչ մի սուրբի առանց մատաղի չէին Թողնիլ, առանց մօտն ուխտ գնալու չէին մնալ:

Ուխտագնացութիւնը և ուխտակատարութիւնը ժամանակի ամենակարևոր հոգեկան պահանջներից մէկն էր: Շատ անգամ այնպիսի տեղեր էլ էին գնում, ուր ոչ եկեղեցի կար և ոչ մատուռ, այլ մի մեծ քար միայն կամ մի մեծ ծառ, որոնց մօտից բղխում էր մի յորդահոս պաղ ու վճիտ աղբիւր, որ ամենայն ցաւի դեղ էր համարւում մօտը եղած զօրաւոր ծառի կամ քարի շնորհիւ:

Չնուց մնացած տարրապաշտութիւնը շարունակւում էր գոյութիւն ունենալ: Քրիստոնէութիւնը միայն ա ւ ե լ ա ց ե լ, բարդել էր նրա վրայ, առանց նրան դուրս մղելու և նրա տեղը բռնելու: Սրանից էր, որ ժողովրդի կրօնական և բարոյական աշխարհը ներկայացնում էր մի խառնուրդ կիսահեթանոսական և կիսաքրիստոնէական և սրանից յառաջ էր գալիս այն մոլար ուղղութիւնը, որ տիրապետում էր ժողովրդի բոլոր դասակարգերի մէջ և նոյն իսկ հոգևորականութեան: Այս դարերումն էր, որ ճգնաւորն ու ջադուգարը մրցում էին իրար հետ, որ տեսնեն որն աւելի առաջ կը մտնի արքայութեան դռանովը, և որն աւելի նախամեծար կը համարւի բոլոր սուրբերի մէջ:

9

Մէկ անգամ, երբ արդէն յղի էր Նախշունը, բայց իրանց անփորձութիւնից չը գիտէին, Թէ երբ է ծնւելու ժամանակը, մարդ ու կնիկ վեր կացան գնացին ուխտ—Հախպատու վանքը, որ երեք օրւան չափ հեռու էր իրանցից:

Առաջին անգամն էին տեսնում այդ հոյակապ շինութիւնը, որի մէջ մտնելուն պէս՝ մի առանձին ահ ու սարսափ զգացին նրա մեծութիւնից: Մինչև այդ օրը նրանց տեսած եկեղեցիքն ու ուխտատեղիքը մանր մունր մատուռներ էին եղել:

Վանքի վանահայրը, որ մի հին ճգնաւորի պատկերով սուրբ և պատկառելի ծերունի էր, նորեկ ուխտաւորներին սիրով հիւրընկալեց և մի յարմարաւոր սենեակ տըւաւ նրանց:

Մօտ կէս գիշերին Նախշունի ցաւը բռնեց:

Լաւ էր, որ վանքումը կային տնտես պառաւ կանայք, որոնք հմուտ էին և տատմէրութեան: Մարկոսը յայտնեց ժամկոչին, ժամկոչն էլ պառաւներին, որոնք իսկոյն հասան և Նախշունին բարի ազատում տուին:

Միւս առաւօտուն վանահայրն իմացաւ, որ նորեկ ուխտաւորներին արու զաւակ է տըւել Աստուած, գնաց սենեակը փարատեց, ծնողացն աչքալոյս ասաց, և երեխայի նոյնտեղ ծնւելը նրա համար լաւ ապագայի նշան համարելով՝ աւելացրեց.

—Աստուծոյ մատն է առաջնորդել ձեզ դէպի այս սուրբ վայրը, որպէս զի ձեր ծնունդը սուրբ համարւի նրա առջև: Թող այս մանուկը վանքի ժառանգը համարւի: Երբ որ եօԹը տարեկան կը դառնայ, կը բերէք այստեղ և կը նուիրէք Աստուծուն: Եւ Թող նրա աջն ու խաչը հովանի և պահապան լինի սորա վրայ:

Ցետոյ դառնալով ծննդկանին՝ ասաց.

—Ծիծ սակաւ ուտեցրու, ախջիկս, Թող հիմիկւանից քիչ ուտել սովորի: Ուրբաթ չորեքշաբթի ծիծ չը տաս, գոնէ մինչև երեկոյ, Թող հիմիկւանից պաս ու ծոմ պահել սովորի: Միայն աջ ծիծդ ուտեցրու, ձախից չուտեցնես, Թող ձախը ցամաքի, որ հիմիկւանից սովորի միշտ չարից խորշել և բարւոյն հետևել: Առանց աղօթքի չը քնացնես, եԹէ աղօթք չը գիտես, սովորիր: Երբ որ կը քնէ, խաչակնքիր՝ վրան, որ չարի փորձանքներից ազատ մնայ: Երբ որ պորտը վայր կընկնի, դէն չը գցէք, տարէք վանքի պատի տակին Թաղեցէք, որ վանական և վանահայր դառնայ:

Պատկառելի ծերունու վերջին մարգարէական խօսքը մեծ տպաւորութիւն գործեց կրօնական ջերմեռանդութեամբ լցւած ծնողաց վրայ, և նոյն րոպէին խոստացան՝ նորածին զաւակը Աստուծուն նուիրել, երբ կը դառնայ եօԹը տարեկան:

Իսկ վանահայրը, որ բնաւ չէր կասկածում ոչ իր ասածի և ոչ ծնողաց խոստմունքի վրայ, շատ ուրախացաւ, և խոստացաւ, որ Սիմէոն ծերունու պէս կը գրկէ նորածին մանուկը, երբ նա քառասնօրեայ կը դառնայ, իսկ եօԹն օրից յետոյ կը մկրտէ նրան և ինքը կը լինի կնքահայր:

—Մինչև քառասուն օր դուք վանքի հիւրն էք, ասաց նա, աւելի վաղ անկարելի է գնալ: Ապսպրեցէք, որ ուրիշները քաշեն ձեր տան հոգսը:

(Կը շարունակվի)

բակութիւնը կերակրել «Արշակ երկրորդ» պիէսայից վերցրած գործողութիւններով, և իրանց դերերը չիմացող դերակատարներով։ Վերջապէս արխիվը պէտք է գցել այդ պիէսաները, որոնց ամենագեղեցիկ համարված տեսարանները և խօսքերը միայն ծիծաղ են շարժում։ Մի թէ չէր կարելի ընտրել մի փոքր ի շատ կարգին պիէսա և ներկայացնել, փոխանակ ներկայացնելու զանազան անհամ կենդանի պատկերներ, և զանազան այնպիսի ողբերգական տեսարաններ, որոնց ամբողջ ողբերգութիւնը միայն ծիծաղեցնում է,—և ուրիշ ոչինչ։ Պէտք է հասկանալ վերջապէս և այն, որ հասարակութիւնը ազգասիրաբար երբէք թատրոն չի յաճախի. և եթէ հայ դերասանները փոխանակ աշխատելու նիւթ տալ թատրոնում հաւաքված հասարակութեան մտքին և ճաշակին, կը բաւականանան միմիայն այդ հասարակութեան «ազգասիրութիւնը» հրստահարելով,—այն ժամանակ,—թող լաւ իմանան,—հայոց ներկայացման միակ հանդիսականները թատրոնի անշունչ աթոռները կը լինեն և ուրիշ ոչ ոք....

—

Շուտով Վարշավայում բացվելու է կանանց դեղատուն։ Այդ դեղատան աշխատողները բացառապէս կը լինեն կանայք։

—

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցը ներկայումս կատարելապէս լի է հիւանդներով, այնպէս որ հիւանդանոցը այլ ևս նոր հիւանդներ չէ ընդունում։ Ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, այդտեղ եղող հիւանդների թիւը այժմ հասնում է 235-ի։ Չենք կարող չը նկատել, որ հիւանդանոցում տեղ չը լինելը շատ զգալի է մանաւանդ այժմ, երբ քաղաքում զանազան հիւանդութիւններ տարածված լինելով՝ հիւանդանոցին դիմողների թիւը շատ և շատ մեծ է։ Սրանից մի քանի ժամանակ հարց ծագեց առանձին հիւանդանոց հիմնել տարափոխիկ հիւանդութիւններով վարակվածների համար,—և եթէ այդ համակրելի միտքը չիրագործվի, այն ժամանակ քաղաքային հիւանդանոցը միշտ ստիպված կը լինի մերժել իրան դիմող բազմատեսակ և բազմաթիւ հիւանդներին։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի առանձին մաքսատուն հիմնել և Սերախսում (Անդրկասպեան երկիր)։ Ինչպէս յայտնի է, Ուզուն-Ադայում մաքսատան հիմնելը արդէն վերջացած բան է։

—

ԹԻՖԼԻՍԻ դումայի նիստում, յունվարի 16-ին, ընտրվեցան՝ քաղաքագլխի օգնական Պ. Իզմայլով, քաղաքային փոխատու արկղի կառավարիչ Մ. Ղազարեանց, որը ընտրվեց և ուղղավայի անդամի կանդիդատ, իսկ ուսումնարանական մասնաժողովի անդամներ ընտրվեցան. Պ. Իզմայլով, Մ. Թամամշեվ, իշխան Կ. Բէհրութով, Կ. Ալիխանով, Գ. Եւանգուլով, Ա. Խլանէնկո, իշխան Վ. Միքելաձէ, Ս. Վէյս-ֆոն-Վէյսէնհով, Ա. Ցովհաննիսեան և Վ. Կանդուրալով։

—

Անդրկասպեան երկրի մաքսատներով օպիում ներմուծելը արգելված է։ Այդ կարգադրութեան նպատակը առողջապահական է։ Տեղական մահմետական ազգաբնակութեան մէջ օպիումի գործածութիւնը տարածված սովորութիւն է, և դրանով մտադրութիւն կայ այդ սովորութիւնը վերացնել։

—

Թիֆլիսի ժողովարանում, ուր «ընտանեկան երեկոյթների» ժամանակ «յօրանջելը» դարձել էր ամենքի միակ զբաղմունքը, յունվարի 17-ին տեղի ունեցաւ դիմակահանդէս, որով ժողովարանի աւագները անկասկած ցանկանում էին մի փոքր կենդանութիւն մտցնել այդ հիմարկութեան սառած սենեակների մէջ։ Դիմակահանդէսը անաջող չէր կարելի համարել. պարը տևեց մինչև առաւօտեան ժամը 3-ը։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը։ «Քանի մի օր առաջ երկու թուրքեր, յարձակվելով մի ռուս զինուորի վրա, մի քանի տեղից ծանր կերպով վիրաւորում են նրան։ Զարագործները բանտարկված են»։

—

Մեզ գրում են որ բամբակը ԵՐԵՒԱՆՈՒՄ շարունակում է ընկած գնի մէջ մնալ, չը նայելով որ մի քանի նոր ֆիրմաներ էլ այս տարի աւելացել են։ Այժմ Ամերիկայի սերմի բամբակը վաճառվում է 7 ր. 50 կ. մինչև 8 ր. 50 կ., այն ինչ անցեալ տարի այս ժամանակները մինչև անգամ 12 ռուբլիով էր վաճառվում։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Այստեղ անսովոր ցրտեր է անում։ Առաւօտները ցուրտը հասնում է 10 աստիճանի։ Մթերքները շատ թանգ են»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Անցեալները տեղական բանտում մի թուրք, որին վճռել էին Սիբիր աքսորելու, թշնամութիւն ունենալով նոյն բանտում բանտարկված մի այլ թուրքի հետ, ածելիով մորթում է նրան։ Խուզարկեցին բանտի սենեակները և բաւական թւով սուր երկաթներ և ածելիներ գտան այդտեղ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՊԵՏԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Վերջին ամիսներում Իտալիայի և Գերմանիայի, ուրեմն և Իտալիայի ու Աւստրիայի յարաբերութիւնների մէջ տարաձայնութիւններ են առաջ եկել. այդ տարաձայնութիւնները այնքան էլ դիպլոմատիական բնաւորութիւն չունեն, այլ նրանք գլխաւորապէս բղխում են իրան իտալական ժողովրդի հիմնական հայեցակէտերից։

Այդ տարաձայնութիւնների շնորհով երեքպետեան դաշնակցութիւնը, որի համար այնքան քրտինք է թափել իշխան Բիսմարկ, մի փոքր երերուն է դառնում և այդպիսով անհանգստութիւն է պատճառում թէ Բերլինում և թէ Վիէննայում, ուր, ի հարկէ, սառնասրտութեամբ չեն կարող նայել այն երևոյթների վրա, որոնք փոքր առ փոքր ձգտում են հեռացնել Իտալիան Գերմանիայից։

Իսկ Գերմանիայից հեռանալ ուղղակի կը նշանակէ մօտենալ Ֆրանսիային,—և ահա թէ ինչու Իտալիայի յետ կանգնելը երեքպետեան դաշնակցութիւնից ուղղակի կարող է հարուած լինել Բիսմարկի քաղաքականութեան համար։

Իտալիայի երեքպետեան դաշնակցութիւնից հեռանալուն այժմ նպաստում է նոյն իսկ Անգլիան, որը այժմ աշխատում է իրան մօտեցնել Իտալիային և նրա հետ ծովային դաշնակցութիւն կապել։ Անգլիայի այդ ձգտումների վրա, ի հարկէ, սառնասրտութեամբ չէ կարող նայել իշխան Բիսմարկ, քանի որ Անգլիան միշտ դէմ է եղել թէ երեքպետեան դաշնակցութեան և թէ իշխան Բիսմարկի քաղաքականութեան։

Անգլիայի հետ դաշնակցութիւն կապելու գործը, ինչպէս երևում է, լաւ է ընդունվում իտալական ազգի կողմից։ Հասարակական կարծիքը այդ կողմն է թեքվում։ Հեռագրական և լրագրական լուրերից արդէն երևում է, որ լորդ Դիւֆերինի Հռոմ գալը յայտնի նպատակով, այն է Իտալիայի հետ ծովային դաշնակցութիւն կապելու համար,—աջողութիւն է գտնում։ Բացի դրանից Իտալիայի և Անգլիայի բարեկամութեան գործին շատ կը նպաստէ և Գլադստոն, որի Հռոմ գալը և լաւ ընդունվելը արդէն մեծ դրական է, որ ազատամիտ կուսակցութեան այդ յարգելի ներկայացուցչի ազդեցութիւնը ապարդիւն չի անցնի այն գործի համար, որը կայանում է հետևեալի մէջ,—մօտեցնել Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան միմեանց հետ։

Աւելորդ չէ, ի հարկէ, դրան աւելացնել և այն, որ որտեղ Գլադստոնն է աջողութիւն գտնում, այնտեղ աջողութիւն գտնել չէ կարող իշխան Բիսմարկ. իշխան Բիսմարկ և Գլադստոն երկու հակառակ բևեռներ են ներկայացնում, որոնք երբէք միմեանց մօտենալ չեն կարող։

Իտալիայի և Գերմանիայի միմեանցից հեռանալուն ի վերջոյ կարող է նպաստել և այն հանգամանքը, որի վրա մենք նորերս մատնանիշ արեցինք մի առանձին յօդուածով. այդ այն է, որ իշխան Բիսմարկի միլիտարիզմը շատ թանգ է նստում մանուկ Իտալիային. դրա շնորհով երկրի հարկերը անչափ չատացրած են, ահագին ծախքեր են լինում զինուորական նպատակների համար, ժողովուրդը ճնշվում է ծանր հարկերի տակ, և չը նայած դրան, Իտալիան այս տարի, ինչպէս յայտարարել է ֆինանսների մինիստրը, կունենայ մօտ կէս միլիարդ լիրա դեֆիցիտ....

Այդպիսի երևոյթի հետ, ի հարկէ հաշտվել չէ կարող իտալական ժողովուրդը, և կառավարութիւնը ցանկանալով մի փոքր հաշտվել այդ կարծիքի հետ, ստիպված կը լինի մի փոքր սառչել դէպի Գերմանիան,—և այդ առաջին քայլը կը լինի, որ երեքպետեան դաշնակցութիւնը իրան կը դդայ շատ խախուտ հիմքերի վրա կանգնած։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սոֆիայից հեռագրում են, որ Ստամբուլովի կուսակցութիւնը կատաղի կերպով հալածում է հոդևորական կուսակցութեանը և այդ երկու կուսակցութիւնների թշնամութիւնը իր գագաթնակէտին է հասել։

—Վիէննայից եկած վերջին լուրերից երևում է, որ պրինց Բատտենբէրգի Վիէննա գալը առանձին քաղաքական նպատակ չէ ունեցել, և ուրեմն այդ մասին տարածված լուրերը անհիմն են։

—Փարիզից գրում են, որ հանրապետական կառավարութիւնը վճռել է լոյս հանել մի քանի դոկումենտներ, որոնք կարող են շատ արատաւորել Բուլանժէին։ Բուլանժեականները շատ երկիւղ են կրում, որ այդ դոկումենտների շնորհով Բուլանժէ միանդամայն կարող է ընկնել հասարակաց աչքում։

—Փարիզի «XIX Siecle» լրագիրը հաստատում է, որ բուլանժեան ագիտացիայի համար գործ դրվող փողերի մեծ մասը տալիս է պրինց Բոլանդ Բոնապարտ։ Նոյն լրագրի խօսքերին նայելով պրինց Բոլանդ Բոնապարտ պաշտպան է Բուլանժէին՝ իր հօրեղբայր՝ պրինց Ժերոմ Բոնապարտի ցանկութեամբ։

—Հռոմից հեռագրում են, որ իտալական պետութեան ֆինանսական գործերը շատ վատ դրութեան մէջ են, դեֆիցիտը շատ մեծ է և կառավարութիւնը չը գիտէ թէ ինչով պէտք է ծածկէ այդ դեֆիցիտը։

—Վիէննայից հեռագրում են, թէ սուտ է այն լուրը, որ իբրև թէ պրինց Ալէքսանդր Բատտենբերգ մտադիր է մտնել աւստրիական ծառայութեան մէջ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Գերմանիայում լոյս է տեսել մի գրքոյկ, որի հեղինակը մի կին է։ Գրքոյկը կրում է հետևեալ վերնագիրը. «Գիրք ջահիլ կանանց համար», թէ ինչպէս պէտք է վարվել մարդու հետ մեղրամսի ընթացքում, որպէս զի կարելի լինի իշխանութիւն ձեռք գցել և թոյլ չը տալ մարդուն որ նա տէր դառնայ իր կնոջ գլխին։»

*
* *

Այս օրերս Շվեյցարիայի Ժընեվ քաղաքի համալսարանի բնագիտական բաժինը յատկացրել է այդ բաժնի գլխաւոր մրցանակը (500 ֆրանկի չափով) մի ռուս երիտասարդ կնոջ, տիկին Ստեֆանովսկուն, նրա դիսէրտացիայի համար, որը կրում է «Միջատների տեսողութեան զարգացումը» վերնագիրը։

*
* *

Նոր տարուց Բրիւսէլում սկսվեց հրատարակվել «La jeune fille» անունով մի ամսագիր, որի նպատակն է գիտութիւններ և օգտակար տեղեկութիւններ տարածել ջահիլ աղջիկների մէջ։ Խմբագրութեան զեկավարն է բելգիական թագուհի Մարիա Հենրիէտան, որը իր յօդուածների տակ ստորագրում է «Madame Reyer» կեղծ ազգանունը։ Ամսագրի գրականական բաժնի կառավարիչն է թագուհու աղջիկը, իտալական թագաժառանգի նշանածը՝ իշխանուհի Կլէմէնտինա, որը ստորագրվում է «Marthe d'Orcy» կեղծ անունով։ Ամսագրի աշխատակցուհիների թւում գտնվում են բուլգարական Եղիսաբէթ թագուհին, որի յօդուածները տպվում են «Կարմէն Սիլվա» ստորագրութեամբ, և աւստրիական էրցհերցոգուհի Վալերիա։ Ամսագրի գեղեցարուեստական բաժնում մասնակցում է աւստրիական թագաժառանգի ամուսինը՝ էրցհերցոգուհի Ստէֆանիա։ Նոր ամսագրի խմբագրութիւնը դեռ էլի աշխատակցուհիներ է որոնում, բայց կրկին մեծամեծների շրջանից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՓԱՐԻԶ, 16 յունվարի։ Մեծ կենդանութիւն է տիրում Փարիզի մի քանի փողոցներում, բայց անկարգութիւն չը կայ, բացի աննշան ընդհարումներից։ Կէս գիշերին Բուլանժէ դուրս եկաւ Դիւրանի բէստորանից և կառքով գնաց, ուղեկցված լինելով մեծ ամբոխով։ Երեկոյեան դուրս եկաւ մինիստրների խորհուրդը, որպէս զի քննի ներկայ դրութեան հաւանական հետևանքները։ Բուլանժէ ընտրվեց Փարիզի պատգամաւոր 244,070 ձայներով։ Քուէարկողների թիւը 435,860 էր։

ՓԱՐԻԶ, 16 յունվարի։ Հանրապետական լրագիրները խոստովանում են, որ Բուլանժէի ընտրութեամբ հանրապետական կուսակցութեանը մեծ հարուած է տրվում, բայց և այնպէս այդ կուսակցութիւնը չը պէտք է յուսահատվի, այլ հարկաւոր է պահպանել սառնասրտութիւն և առաջվանից աւելի ամրացնել բոլոր հանրապետականների դաշնակցութիւնը ցեղարիզմի դէմ։ Միապետական և բուլանժեան լրագիրները երէկվայ ընտրութիւնների հետևանքների մէջ տեսնում են պարլամենտական հանրապետութեան դատավճիռը և դրա չուտափոյթ անկման նշանը։ «Նրա ընտրողների ճայնատուութիւնը,—ասում են յիշեալ լրագիրները,—ուղղված է յատկապէս այժմեան կառավարութեան դէմ»։

ՀՌՈՄ, 16 յունվարի։ Այսօր ութ քաղաքական ընկերութիւններ տօնեցին 1870 թվի Դիժոնի մօտ եղած՝ Գարիբալդեան ճակատամարտերի յիշատակը։ Հռետորներից մէկին ոստիկանութիւնը խանգարեց խօսել. կռիւ սկսվեց, որը վերջացաւ մի քանի մարդկանց վէրք հասցնելով։

ՓԱՐԻԶ, 16 յունվարի։ Լուրերին նայելով, մինիստրութիւնը թեքվում է դէպի պատգամաւորների ժողովի լուծելը և ապրիլին ընդհանուր ընտրութիւնների նշանակելը, ի նկատի ունենալով փոփոխել ընտրութիւնների վերաբերեալ օրէնսդրութիւնը այն ուղղութեամբ, որով կարելի լինէր խափանել ամեն տեսակ ճայնահաւաք դիտումները։ Մի քանի պատգամաւորներ առաջարկում են եռանդուն միջոցներ առնել Բուլանժէի դէմ և խորհուրդ են տալիս մինիստրութեան կազմելը յանձնել գեներալ Կոմնենոնին։

ԼՕՆԴՕՆ, 16 յունվարի։ Ուրբաթ օր, Dar Estaleme-ի մէջ կատաղի ընդհարումներ տեղի ունեցան, որի ժամանակ սպանվեցան շատ արաբներ, իսկ գերմանացիները ոչ մի կորուստ չունեցան։ Արաբները հրաժարվում են փրկանք ընդունել գերիների համար և դրականապէս պահանջում են, որ օտարները հեռանան ափերից և գերիները ընդունեն մահմետական կրօնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Երէկ Ձմերային պալատում կայացաւ առաջին պարահանդէսը։ Հիւրերի գալը սկսվեց մօտ ժամը 9-ին։ Նիկողայոսեան դահլիճը ընկղմված էր ծաղիկների և բոյսերի մէջ. Պոմպէյեան դահլիճում տեղաւորված էր գլխաւոր բուֆէտը։ Բոլոր դահլիճները լուսաւորված էին էլէկտրականութեամբ, իսկ այդին լուսաւորված էր լուսնի լոյսի նմանութեամբ։ Արաբական դահլիճում դրած էին սեղաններ թղթախաղի համար։ Պարահանդէսը սկսվեց պոլկա պարով, որի մէջ մասնակցեցին Նոցա Կայսերական Մեծութիւնները։ Առաջին կադրիլը թագուհի Կայսրուհին պարեց թիւրքաց դեսպանի հետ։ Պարահանդիսին ներկայ էին չերնօգորեան իշխանուհիները։ Ընթրիքը սկսվեց ժամը 12-ին։ Բարձրագոյն սեղանը պատրաստված էր Գէորգեան դահլիճում։ Կայսրը չէր ընթրում, այլ պալատի մինիստրի ընկերակցութեամբ մօտենում էր հիւրերին։ Սեղանի մէջտեղը, Կայսրուհու տեղի դիմաց շինված էր հոտաւէտ ծաղիկների թումբ։ Սեղանի վրա դրված էր 31 կուվէրտ։ Ընթրիքից յետոյ պարը վերանորոգվեց առ ժամանակ. պարահանդիսին ներկայ էին 2110 հոգի, որոնց մէջ և դիպլոմատիական խումբը ամբողջապէս։

ՓԱՐԻԶ, 17 յունվարի։ Ֆլօկէ ենթադրում է ներկայացնել մի նախագիծ, որով առաջարկվում է վերականգնեցնել շրջանների կատարվող ընտրութիւնը և խափանել ճայնահաւաք դիտումները, որպէս զի սենատի դատին ենթարկվէին այն անձինք, որոնք ընտրութիւնների ժամանակ միջոցների են դիմում, ինչպէս Բուլանժէ։ Պատիժը կարող է հասնել աքսորման։ «Temps» լրագիրը ընդդէմ է խիստ միջոցներ ձեռք առնելու գաղափարին։ Լրագիրը չէ կարծում, որ Բուլանժէ դաւադրութիւն պատրաստէր. նա այդ բանի կարիք չէ ունեցել. որ և է նոր ագիտացիա կարող է միայն նրա օգտին ծառայել. ընտրողները ճայն են տուել յատկապէս անընդունակ և ուժասպառ պատգամաւորների ժողովի դէմ։ «Temps» խորհուրդ է տալիս յետաձգել պարլամենտական նստաշրջանը մինչև հոկտեմբեր, երբ տեղի կունենան նոր ընտրութիւնները, իսկ մինչև այդ ժամանակ կառավարել երկիրը խելացիու-

թեամբ, վերադառնալով թիւերի պահպանողական քաղաքականութեան։

ՓԱՐԻԶ, 17 յունվարի։ «Matin» լրագրի խօսքերին նայելով, Բուլանժէ յայտնել է, որ հինգշաբթի օր ինքը կը գայ պատգամաւորների ժողովը, որպէս զի նորից առաջարկի լուծել այդ ժողովը։ Այսօր առաւօտեան մինիստրների խորհուրդը վճռեց,—անյապաղ ներկայացնել չրջաններով ընտրութիւն անելը վերականգնելու մասին։ Ժողովը լուծելու հարցը կախված կը լինի հանգամանքներից, իսկ ձայնահաւաք զիտումները խափանելուն վերաբերեալ նախագիծը անհետևանք կը յայտարարվի։

ՎԻԵՆՆԱ, 18 յունվարի։ Ունգարիայում ամենուրեք կայանում են միտինգներ, որոնք բողոքում են զինուորական օրէնքի դէմ։ Երէկ զիմադրականները խիստ կերպով յարձակվում էին Տիսսայի վրա, այն պատճառով, որ նա ուզարկել է գաղտնի ոստիկանութեան գործակալներ պարլամենտի վերնատունը։ Այսօր պարլամենտի շուրջը խռնված են ուսանողները և ժողովուրդը։ Զօրքին հրամայված է զօրանոցներից չը հեռանալ։ Երկիւղ են կրում, որ փողոցային խառնակութիւններ կը պատահեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունվարի։ Այսօր կը ժամանէ Պետերբուրգ Հէսսէնի մեծ դուքսը իր աղջկայ՝ իշխանուհի Ալիսայի հետ միասին։—«Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ ֆինանների մինիստրութիւնը առաջարկեց բօրսային մասնաժողովներին յայտնել իրանց կարծիքը հացի առևտրի մէջ մակլէրներից նախագծվող հարկ վերցնելու վերաբերմամբ։

ՓԱՐԻԶ, 18 յունվարի։ Բուլանժէ Սէնայի դէպարտամէնտի ընտրողներին նամակով չնորհակալութիւն է յայտնում այն եռանդի համար, որով նրանք ջարդեցին պարլամենտական միութիւնը և մէկ հարուածով չնչեցին բամբասանքները և իրան բամբասողներին։ Պաշտօնական անձանց աղնութեան և ընդհանուր ձայնատուութեան անկեղծութեան վրա հիմնված ազգային հանրապետութիւնը Բուլանժէ այժմ հիմնված է համարում և կարծում է, որ պատգամաւորների ժողովի արձակումը այժմ անխուսափելի է և սրանից յետոյ հանրապետութիւնը բաց է բոլոր ազնիւ ֆրանսիացիների համար։

ՍՈՒԷՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունվարի 17-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—. . 94 ր. 40 »
Համբուրգի վրա 100 մարկ — . . 46 » 20 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . 37 » 25 »
Ոսկի — արժէ — . . 7 » 56 »
Մաքսային կուպոններ — . . 151 » 25 »
Արծաթ — — — . . 1 » 14 »
Բօրսային զիսկոնտներ — . . 6¾ և 7½% »
Պետական. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի 98 » 50 »
— — — — 2-րդ — 98 » 25 »
— — — — 3-րդ — 97 » 87 »
— — — — 4-րդ — 97 » 87 »
— — — — 5-րդ — 97 » 87 »
Ոսկեայ փոխառութիւն. . . . . — » — »
Նոր 4% փոխառութիւն. . . . . 82 » 25 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ. 98 » — »
— — 2-րդ — 98 » — »
— — 3-րդ — 97 » 50 »
Ներքին 5% առաջին փոխառութ. 265 » — »
— երկրորդ — 248 » 25 »
5½% բէնտա . . . . . 102 » — »
Ոսկեայ բէնտա. . . . . 169 » 62 »
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն. . . . . 147 » — »
Նոր երկաթուղային բէնտա . . . 98 » 25 »
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ. . . . . — » —
— — թղթադ. . 91 » 25 »
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . . 98 » — »
5½% գրաւական թղթեր խերսոնի կալուած բանկի. . . . . 97 » 62 »
6% գրաւակ. թղ. խարկովի կալ. բան. 100 » 75 »
— — Պոլտավայի— — 100 » 50 »
— —Պետ.Տուլսկ.— — 100 » — »
— — Կիեվի — — 101 » — »
— — Մոսկվայի — — 101 » 25 »
— — Բեսարաբ. Տամբ.— 99 » 75 »
— — Նիժ. Սամար. — 100 » 25 »
— — Վիլնայի — 99 » — »
— — Թիֆլիսի—72 և — տ. — » — »
— —Քութայիսի—18 և — տ. — » — »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները 660 » — »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 233 » — »
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ. . . . . 86 » — »
Սուէտ Պետերբուրգի քաղաքային օրլիգացիաներ. . . . . 93 » 25 »
Մոսկվայի քաղաք. օրլիգացիաներ . 92 » 25 »
Օդէսայի — — . 93 » 62 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. . — » — »

Սուէտ Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սուէտ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ղ. Անտառային դպրոցի հայ ուսանողներին «Մշակը» ուղարկված է արդէն։ Մենք ուղարկում ենք դպրոցի ընթերցարանին, հայ ուսանողների համար։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՌՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՆԴԻԴԱՏ ընական զիտութիւնների, կամենում է ԴԱՍԵՐ տալ։ Հասցէն „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը կարելի է իմանալ։ 1—5

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ, երգչուհի, կը կամենար Թիֆլիսի մի որ և է տուէտական տան մէջ կամ զործարանում պաշտօն ունենալ։ Գիտէ հաշուապահութիւն, առևտրական զրագրութիւն, հայերէն, ֆրանսերէն, տաճկերէն, իտալերէն և մասամբ անգլիերէն լեզուները։ Իր ուսումը աւարտած է Վենեցիայի Մուրադեան-Բաֆայէլեան դպրոցում։ Տեղեկութիւնների համար զիմել „Մշակի“ խմբագրատուն։ 1—2 (Հ. Ե.)

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Дворцовая улица, КАРАВАНСАРАЙ БЫВШ. АРЦРУНИ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Դվորցովայա փողոցում, նախկին Արծրունի քարվանսարայում

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ

ԲՐԴԵԱՅ ՎԵՐՄԱԿՆԵՐ ամենաէժան գներից մինչև ամենաթանգ գները։

ԴՕՆՆԷՐ և ԼԷՅՏՏ

6—10 (Հ)

ԿՈՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱՂԱՍԻ ՏԷՐ-ՋԱԲԱՐԵԱՆԻ

Գոլովինսկի, տուն Բէյտերի, № 11.

Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կօշիկների պատուէրներ, ՁԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ. պատրաստվում են չուտով։ Պատուէրները ընդունվում են խանութում. պատրաստելուց յետոյ կարելի է ստանալ միայն խանութում. տուն չէ ուղարկվում։

7—10

1839 Г. 50-ЫЙ ЮБИЛЕЙНЫЙ ГОДЪ 1889 Г.

МУЗЫКАЛЬНАГО ЖУРНАЛА

„НУВЕЛЛИСТЪ“

Въ наступающемъ 1889 году «НУВЕЛЛИСТЪ» кончаетъ первое, полувѣковое свое существованіе. Пользуемся этимъ случаемъ, чтобы выразить нашу глубокую благодарность: музыкальнымъ дѣятелямъ, какъ отечественнымъ, такъ и иностраннымъ, помогавшимъ намъ вести наше изданіе, и публикѣ, сочувствіе и поддержка которой давала намъ возможность служить высокой задачѣ, полвѣка назадъ ставшей девизомъ «НУВЕЛЛИСТА».

Оглядываясь на тяжелое прошлое, пережитое нажимъ журналомъ, мы не безъ гордости высказать можемъ, что силы и энергія потраченныя редакціею на неустанное, полувѣковое веденіе своей нелегкой работы, нашли себѣ достойную оцѣнку въ средѣ русскаго общества и въ средѣ русской семьи по преимуществу. Предоставленные самимъ себѣ и никогда не пользуясь, ни прямо, ни косвенно, посторонними субсидіями, мы черпали—и духовныя и матерьяльныя средства для веденіи журнала только въ общественномъ сочувствіи нашему дѣлу. Это дорогое намъ сочувствіе нынѣ и возлагаетъ на насъ обязательство, продолжать наше изданіе и, по мѣрѣ возможности, его совершенствовать.

Желая достойнымъ образомъ ознаменовать окончаніе перваго полувѣка существованія «НУВЕЛЛИСТА», редакція рѣшила дать въ этомъ юбилейномъ году цѣлый рядъ пьесъ выдающихся композиторовъ, какъ русскихъ, такъ и иностранныхъ, написанныхъ исключительно для юбилейнаго года «Нувеллиста».

Въ юбилейномъ году будутъ помѣщены сочиненія, между прочимъ, слѣдующихъ музыкальныхъ авторовъ: Рубинштейна, Чайковскаго, А. Н. Сѣрова («Ноктюрнъ» принесенный въ даръ редакціи «Нувеллиста» для юбилейнаго года, сестрою композитора), Направника, Иванова, Соловьева, Дюбюка, Главача, Бориса Шель, Зике, Мамарова, Капри, Тивольскаго, Малашкина, Лишина (посмертное сочиненіе), Гуно, Сенъ-Санса, Массенэ, Годара, Рейнеке, Шарвенка, Мошковскаго, Штрауса и мног. друг.

«МУЗЫКАЛЬНО-ТЕАТРАЛЬНАЯ ГАЗЕТА»

будетъ выходить въ продолженіи музыкальнаго сезона—въ январѣ, февралѣ, мартѣ, апрѣлѣ, сентябрѣ, октябрѣ, ноябрѣ и декабрѣ.

ПРЕМІЯ ЮБИЛЕЙНАГО ГОДА.

Эта премія будетъ состоять изъ большого художественнаго альбома, въ которомъ будутъ помѣщены автографы знаменитыхъ музыкантовъ, наброски извѣстныхъ художниковъ и портреты выдающихся музыкальн. дѣятелей.

Въ портфелѣ редакціи находятся между прочими письма, манускрипты, записки и пр. нижеслѣдующихъ музыкальныхъ дѣятелей: Русскихъ: Алябьева, Балакирева, Бахметева, Булахова, Варламова, Глинки, Гурилева, Гензельта, Даргомыжскаго, Дюбюка, Давыдова, Дрейшока, Монюшко, Мусоргскаго, Контскаго, Направника, Рубинштейна, Сѣрова, Чайковскаго, Улыбышева и друг. Иностранныхъ: Беріо, Блуменгаля, Ш. Велле, Вьегана, Горіа, Гуммеля, Делера, Гордиджіани, С. Геллера, К. Майера, Мендельсона-Бартольди, Куллака, Листа, Кл. Шуманъ, Роберта Шумана, Серве, Пансерона, Фегиса, Фильда, Эрнста и друг.

Несмогря на большія затраты на изданіе альбома, въ Юбилейный годъ редакція не увеличиваетъ цѣну.

Подписная цѣна 5 руб., съ доставкою и пересылкою 6 руб. подписка принимается: Въ С.-Петербургѣ, въ главной конторѣ «Нувеллиста» при музык. торговлѣ М. БЕРНАРТА, Невскій пр. № 64, уголъ Караванной ул.. противъ Аничкина дворца. Въ Москвѣ, въ муз. магазинѣ П. И. ЮРГЕНСОНА. 1—3

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ

УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան

հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կեանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

1. Կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում։
2. Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆՔԸ ապահովացնելու համար։
3. Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը։

Տարիքները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24.

Գլխաւոր Ագենտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒԶԷՆԲԷՐԳ։

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար։ 30—32 (Հ)

ПОДПИСКА НА

„ТРУДЫ“

Кавказскаго Общества Сельскаго Хозяйства

1889 года,

выходящіе ежемѣсячно и посвященные нуждамъ кавказской сельскохозяйственной промышленности,

ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ,

въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Барятинской улицѣ, въ Александровскомъ саду. Подписная цѣна изданія за годъ ЧЕТЫРЕ РУБ. съ пересылкою во всѣ города Россійской имперіи и доставкою на домъ. Отдѣльные номера не продаются. Для напечатанія въ „Трудахъ“ принимаются сельско-хозяйственныя объявленія, по соглашенію съ бюро Общества. 2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

„ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԻ“

Ա. մասը՝ երկրորդ տպագրութեամբ։ Սրա առաջին տպագրութիւնը բաղկացած էր 470 երեսից, իսկ սա բաղկացած է 504 երեսից։ Պարունակում է իր մէջ 184 հատուած, որոնցից մօտ 100-ը նոր են, ա. տպագրութեան մէջ չը կային։ Ընդունված է իբրև դասագիրք ոչ միայն մեր, այլ և ռուսաց դպրոցներում և զպրանոցներում։ Խորհուրդ է տրվում ամեն ընթերցասէր հայի ձեռք բերել այդ վերին աստիճանի հետաքրքրական ու բազմախորհուրդ գիրքը։ Տպված է մեծ խնամքով մեծադիր և ընտիր թղթի վրա։ Դասվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում։ Գինը առաջվանն է, անհամեմատ էժան՝ 1 ր. 25 կ., ճանապարհածախսով 1 ր. 50 կ.։ Գումարով առնողին՝ հատը 1 ր.։— Յորինողին դիմող՝ գումարով առնողները ճանապարհածախս չեն վճարում։

Հասցէն. «Тифлисъ, на Авлабарѣ, учителю Ованесу Назарянцъ». 3—3

Дозволено цензурою, Тифлисъ 18 Января 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.